

Որակի և սննդի անվտանգության քաղաքականություն

Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերությունը վստահ է, որ իր հաջողությունը կախված է բարձր որակի ապրանքների, փաթեթավորում և ծառայությունների տրամադրելուց, որոնք համապատասխանում կամ գերազանցում են սպառողի և հաճախորդների՝ պրեմիում ապրանքանիշի արտադրանքից ակնկալիքները: Այս վստահության հիմքում Ընկերության կողմից արտադրվող բոլոր ապրանքների սննդի անվտանգության ապահովման պատասխանատվությունն է:

Ընկերությունը հանձնառել է շարունակաբար բարելավել իր կողմից արտադրվող ապրանքանիշերի համբավը և պահպանել իր արտադրանքի հանդեպ սպառողի վստահությունը՝ սննդի անվտանգության համակարգերի, չափանիշների և գործառնությունների զարգացման և իրականացման միջոցով: Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերությունը իր գործունեության բոլոր շուկաներում հանձնառել է շարունակաբար բարելավել իր աշխատանքը, ինչի արդյունավետությունը չափվում, գնահատվում և վավերացվում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին մարմինների կողմից:

Ընկերությունը հավատում է, որ որակի հանձնառությունները կատարելը Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերության յուրաքանչյուր աշխատակցի պարտականությունն է և կախված է իրենց աշխատանքը կատարելուց և շահառուների հետ հարաբերություններից: Սննդի անվտանգությունը՝ բաղադրանյութերի, փաթեթավորման, արտադրման, պահպանման և ապրանքների փոխադրման հետ անմիջականորեն առնչվող բոլոր աշխատակիցների պատասխանատվությունն է: Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերության որակի հանձնառության հիմքում սննդի անվտանգության և որակի հետևյալ սկզբունքներն են.

- Արտադրել և առաքել այնպիսի արտադրատեսակներ, որոնք համապատասխանում են սննդի անվտանգության և որակի բարձրագույն չափանիշներին:
- Համապատասխանել կամ գերազանցել օրենքով սահմանված և կանոնակարգված որակի և սննդի անվտանգությանը վերաբերող բոլոր պահանջները:
- Ապահովել սննդի կայուն անվտանգություն և որակ՝ գործողության բոլոր շուկաներում իրականացնելով և հավաստագրելով որակի կառավարման արդյունավետ համակարգեր՝ համաձայն ISO 9001:2008, ISO 22000:2005, FSSC 22000 համակարգերի և «Կոկա-Կոլա Ընկերության» կառավարման համակարգի չափորոշիչների:
- Վավերացնել սննդի անվտանգության և որակի կառավարման համակարգերի արդյունավետությունը՝ Միջազգային չափորոշիչների կազմակերպության (ISO) և «Կոկա-Կոլա Ընկերության» կողմից ճանաչված ներքին և արտաքին աուդիտների միջոցով:
- Ստեղծել սննդի անվտանգության և որակի կայուն համակարգ՝ տեխնիկական ունակություններ զարգացնող, իրազեկությունը բարձրացնող, ռիսկերը կառավարող և գերազանցության մակարդակը պահպանող ծրագրերի միջոցով:
- Ապրանքների, ընթացակարգերի և տեխնոլոգիաների հետ կապված փոփոխություններին առնչվող սննդի անվտանգության ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով՝ շարունակաբար վերանայել սննդի անվտանգության քաղաքականությունը, չափորոշիչները և ընթացակարգերը:
- Տարեկան բիզնես ծրագրերում ներառել սննդի անվտանգության և որակի ռազմավարությունները՝ ապահովելու համար, որ սննդի

անվտանգությունը և որակը լինեն բոլոր գործառնությունների անբաժան մասը:

- Սահմանել սննդի անվտանգության և որակի չափելի տարեկան նպատակներ բոլոր շուկաների, ինչպես նաև Կոկա-Կոլա Հելլենիկ խմբի մակարդակներով՝ բոլոր չափորոշիչների հետ համապատասխանելիություն և շարունակական բարելավում ապահովելու նպատակով:
- Ապահովել, որպեսզի մատակարարները և կապալառուները ընդունեն սննդի անվտանգության և որակի նույն պարտավորությունները և վերահսկեն իրենց կողմից մատակարարվող նյութերը և ծառայությունները՝ աուդիտների և ներմուծվող ապրանքների ստուգումները միջոցով:
- Մատակարարներին, կապալառուներին, հաճախորդներին և սպառողներին հաղորդակցել սննդի անվտանգության պահանջները՝ սահմանելով մասնագրեր բաղադրամասերի և փաթեթավորման նյութերի, ապրանքների պահպանման և սպառողի ուղեցույցերի համար:
- Սննդի անվտանգության և որակի ռազմավարությունները և կատարողականը հաղորդակցել գործընկերներին, սպառողներին, հաճախորդներին և կարևորագույն շահառուներին, ովքեր որևէ ձևով առնչություն ունեն Ընկերության սննդի անվտանգության և որակի կառավարման համակարգերի հետ:

Որպես գլխավոր գործադիր տնօրեն ես պարտավորվում եմ հավատարիմ մնալ Որակի և սննդի անվտանգության սույն քաղաքականությանը, որը ճանաչվել և հաստատվել է Տնօրենների խորհրդի Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության կոմիտեի կողմից: Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերության յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում այս ծրագրի արդյունավետ իրականացման համար:

Դիմիտրիս Լոյիս

Գլխավոր գործադիր տնօրեն

